Արժեթղթերի շուկայում գործարքներ կատարելիս ներդրողին առնչվող ռիսկեր

- Ֆինանսական գործիքների գների փոփոխության ռիսկ - Արժեթղթերի շուկայական գները և դրանց փոփոխությունները չեն գտնվում Բանկի հսկողության տակ: Նշված պատճառով Արժեթղթերում ներդրման դեպքում հնարավոր է նաև Հաճախորդի պորտֆելի արժեքի նվազում, ընդհուպ մինչև ամբողջ պորտֆելի կորուստը.
- Իրացվելիության նվազման ռիսկ - Այս ռիսկը կապված է տվյալ գործիքի նկատմամբ շուկայի այլ մասնակիցների հետաքրքրության նվազման հետ: Ֆինանսական գործիքի իրացվելիությունը կախված է թողարկողների կորպորատիվ գործողություններից, նրանց ֆինանսատնտեսական գործունեությունից, ընդհանուր շուկայի վիճակից, բորսաների և առևտրային հրապարակների ներքին կանոններից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ տվյալ ֆինանսական գործիքի գնի, հետևաբար նաև Հաճախորդի պորտֆելի արժեքի վրա.
- Օրենսդրության փոփոխության ռիսկ - Այս ռիսկը կապված է պետական իշխանության մարմինների և շուկաները կարգավորող այլ մարմինների գործողությունների հետ, որի հետևանքով Հաճախորդը կարող է կրել կորուստներ.
- Ենթակառուցվածքային ռիսկ - Այս ռիսկը կապված է դեպոզիտարիաների, բորսաների, հաշվարկաքլիրինգային կազմակերպությունների աշխատանքների հետ, որոնց գործունեությունում ընդհատումները կարող են բերել Հաճախորդի ակտիվների (ինչպես դրամական միջոցների, այնպես էլ Արժեթղթերի) կորուստների.
- Էլեկտրոնային առևտրային համակարգերի օգտագործման հետ կապված ռիսկեր - Այս ռիսկերը կապված են համակարգչային սարքավորումների, ծրագրային ապահովման անսարքության առաջացման, էլեկտրասնուցման,

ինտերնետ փրովայդերների հետ կապված խնդիրների, կապի ընդհատումների և այլնի հետ, որոնք կարող են առաջ բերել Հաճախորդի ակտիվների կորուստներ.

- Տեղեկատվության էլեկտրոնային փոխանակման հետ կապված ռիսկեր - Հաճախորդը տեղեկացվում է այն մասին, որ ներդրումային գործունեությունը պարունակում է ռիսկեր՝ կապված մատուցվող ծառայությունների էլեկտրոնային բնույթի հետ, ինչպիսիք են, օրինակ, հուսալի կապի բացակայությունը, էլեկտրաէներգիայի անջատման հնարավորությունը, ծրագրային ապահովման աշխատանքի խաթարումը և այլն.
- Արժեթղթերի շուկայում ինսայդերների կողմից կատարվող չարաշահման ռիսկ – Հաճախորդը տեղեկացվում է այն մասին, որ հնարավոր են դեպքեր, երբ Հաճախորդին վերաբերող տեղեկատվությունը կարող է ապօրինի հրապարակվել կամ տվյալ գործարքի մանրամասները տրամադրվել մեկ այլ երրորդ անձի, որը այն կօգտագործի ի օգուտ իրեն կամ այլ կազմակերպության՝ Հաճախորդի գործունեությանը կամ ֆինանսական միջոցներին վնաս պատճառելու համար.
- Այլ ռիսկեր - Վերը թվարկված ռիսկերի ցանկը սպառիչ չէ: Ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել նաև այլ ռիսկերով.

✓ Բանկը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց գործունեության հետևանքով էլեկտրոնային առևտրի համակարգերի աշխատանքի ընդհատման համար: Բանկը նաև պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց գործունեության արդյունքում Բանկի և Հաճախորդի միջև փոխանցվող տեղեկատվության՝ երրորդ անձանց հասանելի դառնալու համար.

✓ ՀՀ օրենսդրությամբ /և Բանկի ներքին իրավական ակտերով/ նախատեսված այլ տեղեկություններ: